ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/70

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից 16.05.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>Ա/Ձ Նաիրի Թորոսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը (այսուհետ՝ նաև Ա/Ձ) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 16.05.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Ներկերի և լուծիչների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել «Վարբադ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Նաիրի Թորոսյանը (այսուհետ նաև՝ Ընկերություն):

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 10:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 20.04.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց Ա/Ձ Նաիրի Թորոսյանը, 3-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Վարբաղ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի /ապրանքների/ ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Նաիրի Թորոսյանը և «Վարբաղ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացվել են, սակայն դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, բացի այդ, ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ 1-ին չափաբաժնի //ներկ պաշտպանական,ԽՎ-518 /Ներկ պաշտպանական ԽՎ-518// մասով նշված ՏՈՒ գոյություն չունի: «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման /նմանատիպ/ առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները առկա են, իսկ այդ պայմանագրի /պայմանագրերի/ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի /հանձման-ընդունման արձանագրություն և այլն/ պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված /սկանավորված/ տարբերակները բացակայում են:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ 02.05.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

04.05.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակեց մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստը: «Վարբաղ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից պահանջվող շտկումները չեն ներկայացվել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Ա/Ձ Նաիրի Թորոսյանի հայտը:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանի հայտը մերժելու արդյունքում ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Վարբաղ» ՍՊԸ-ն:

08.05.2018թ. Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից դիմում է ներկայացվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (կցվում է), որով Ա/Ձ-ն խնդրել է անհապաղ տրամադրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված՝ «Վարբաղ» ՍՊԸ-ի հայտի, այդ թվում նաև որակավորման փաստաթղթերի (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը), ինչպես նաև գնահատող հանձնաժողովի արձանագրությունների պատճենները:

Ի պատասխան վերոնշված դիմումի՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է միայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստթղթերը:

Այնուհետև, չստանալով դիմումով պահանջված համապատասխան փաստաթղթերը՝ Ա/Ձ-ն կրկին անգամ խնդրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնել պահանջված փաստաթղթերը (նամակը կցվում է), որին ի պատասխան՝ Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկվել է միայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի արձանագրությունները:

10.05.2018թ. Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ևս մեկ անգամ դիմում է ներկայացվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (կցվում է) հետևյալ բովանդակությամբ. «Հայտնում ենք Ձեզ, որ Նաիրի Թորոսյան Ա/Ձ-ն 08.05.2018թ. երկու անգամ՝ էլեկտրոնային փոստի միջոցով դիմել է ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովին, որպեսզի վերջինս տրամադրի «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված երկրորդ փուլի որակավորման փաստաթղթերը, սակայն այդպես էլ ՀՀ ՊՆ-ի կողմից այդ փաստաթղթերը չեն տրամադրվել: Մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությունից հստակ երևում է, որ «Վարբադ» ՍՊԸ-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և նույնիսկ գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է այն շտկելու հնարավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները /անգործությունը/ և որոշումները: Տվյալ դեպքում Նաիրի Թորոսյան Ա/Ձ-ն կարող է բողոքարկել միայն «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը ուսումնասիրելու արդյունքում, որը սակայն ՀՀ ՊՆ-ի կողմից այդպես էլ չի տրամադրվում: Ելնելով վերոգրյալից՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձբաժողովին ևս մեկ անգամ խնդրում եմ՝ տրամադրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված՝ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը)»:

Ի պատասխան վերոնշյալ գրությանը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.05.2018թ. Ընկերության էլեկտրոնային հասցեին է ուղարկել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին

տեղեկատվությունը, ինչպես նաև գրություն, որով հայտնել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի 4-րդ ենթակետը և ՀՀ ՊՆ կարիքների համար ներկերի և լուծիչների ձեռքբերման հրավերի 7.8 կետը՝ հանձնաժողովի կողմից Ձեզ արդեն իսկ տրամադրվել են այն փաստաթղթերը, որոնց տրամադրման իրավունքը հանձնաժողովն ունի»:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները /անգործությունը/ և որոշումները:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում մասնակցի հայտի, ներառյալ գնային, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Ինչպես արդեն նշվել է, 08.05.2018թ. (երկու անգամ) և 10.05.2018թ. Ա/Ձ Նաիրի Թորոսյանը էլեկտրոնային եղանակով դիմել է տեղեկատվություն տնօրինող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ խնդրելով տրամադրել իրեն «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն այդպես էլ չի տրամադրել «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որի արդյունքում Ա/Ձ Նաիրի Թորոսյանը փաստացիորեն զրկվել է հնարավորությունից

գնահատելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովիկողմից կայացրած «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու վերաբերյալ 04.05.2018թ. որոշումը գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

Ավելին, Ընկերության կողմից ներկայացված դիմումներով պահանջված փաստաթղթերը չներկայացնելով՝ Պատվիրատուն ստեղծել է մի իրավիճակ, երբ Ա/Ձ Նաիրի Թորոսյանը 08.05.2018թ.-14.05.2018թ. պահանջելով փաստաթղթերը և այդպես էլ չստանալով՝ զրկվել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնահատող հանձնաժողովի որոշումը բողոքարկելու իր իրավունքը իրացնելու հնարավորությունից:

Գտնում ենք, որ նման պայմաններում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գնումների գործընթացի թափանցիկ և հրապարակային հիմունքներով կազմակերպման սկզբունքը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված յուրաքանչյուր անձի իրավունքը ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Վերոհիշյալը իր հերթին հանգեցրել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնահատող հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրավունքը իրացնելու խախտմանը:

Պետք է նշել, որ 10.05.2018թ. գնահատող հանձնաժողովի պատասխանից պարզ է դարձել, որ արդեն հրապարակվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին խնդրում եմ

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁ-4/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող բոլոր փաստաթղթերի (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի

(հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները անհապաղ տրամադրել Ա/Ձ Նաիրի Թորոսյանին:

2.Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից 2018 թվականի մայիսի 14-ին կայացրած պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Նաիրի Թորոսյան Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից 14.05.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 21.05.2018թ. թիվ ԴՎԱ/1801 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 09.04.2018թ. հայտարարվել է ներկերի և լուծիչների ձեռքբերման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-4/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Ա/Ձ Նաիրի Թորոսյանը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով: Արդյունքում Ա/Ձ Նաիրի Թորոսյանից սահմանված կարգով գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. թիվ 4 արձանագրությամբ պահանջվել է ներկայացնել հրավերով նախատեսված փաստաթղթերը: Վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչի համար սահմանված կարգի համաձայն առաջարկվել է շտկել առկա անհամապատասխանությունները: Ա/Ձ Նաիրի Թորոսյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող շտկումները, ինչի հիման վրա հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել մասնակցի հայտը և 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Վարբադ» ՍՊԸ-ն:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը երկու անգամ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ծանուցում է ուղարկել պահանջելով անհապաղ տրամադրել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-4/6 ծածկագրով գնանշման հարցման 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Վարբադ» ՍՊԸ-ի հայտի, այդ թվում որակավորման փաստաթղթերի (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ

պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները:

Այնուհետև Ա/Ձ Նաիրի Թորոսյանը արդեն գրությամբ 08.05.2018թ. դիմել է գնահատող հանձնաժողովին նմանատիպ պահանջով:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին, ինչը և տրամադրվել է Ա/Ձ Նաիրի Թորոսյանին: Սակայն վերջինիս կողմից պահանջված «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից նախկինում կատարված պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումները չեն տրամադրվել, քանի որ Կարգով նման պահանջ նախատեսված չէ: Նշված հարցի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալին ուղղվել է ԴՎԱ/1712 առ 15.05.2018թ. գրությունը՝ խնդրանքով, որպեսզի վերջինս հայցված փաստաթղթերի տրամադրման իրավաչափության մասով տա պաշտոնական պարզաբանում:

Ակնհայտ է, որ բողոքի քննման ընթացում բողոքաբերի կողմից հայցված փաստաթղթերը չեն կարող տրամադրվել, քանի որ չի ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական պատասխանը, իսկ բողոքի բուն առարկայի մասով կարծում եմ, որ այն թերի հիմնավորված է ենթակա չէ բավարարման»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված է եղել Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Ա/Ձ Նաիրի Թորոսյանի 16.05.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 17.04.2018թ. նիստի թիվ 3, 02.05.2018թ. նիստի թիվ 4, 07.05.2018թ. թիվ 5 արձանագրությունները, ՀՀ ֆինանսների նախարարի տեղեկալ Կ. Թամազյանի կողմից Ա/Ձ Նաիրի Թորոսյանի 17.05.2018թ. հարցմանն ի պատասխան հայտնած դիրքորոշումը, Պատվիրատուի 21.05.2018թ. թիվ ԴՎԱ/1801 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել Ա/Ձ Նաիրի Թորոսյանիը և «Վարբաղ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 17.04.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 20.04.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց Ա/Ձ Նաիրի Թորոսյանը, 3-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Վարբաղ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 02.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Նաիրի Թորոսյանը և «Վարբաղ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացվել են, սակայն դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից

ներկայացված փաստաթղթերում բացակայում են «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, բացի այդ, ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ 1-ին չափաբաժնի (ներկ պաշտպանական,ԽՎ-518 (Ներկ պաշտպանական ԽՎ-518)) մասով նշված ՏՈՒ գոյություն չունի: «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները առկա են, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները բացակայում են:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ 02.05.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

04.05.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակել է մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստը: «Վարբադ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից պահանջվող շտկումները չեն ներկայացվել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ա/Ձ Նաիրի Թորոսյանի հայտը:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանի հայտը մերժելու արդյունքում ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Վարբադ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 1.3 կետով Հանձմնաժողովը որոշել է «Վարբադ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից՝ 3-րդ չափաբաժնի մասով:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ տեղի ունեցած նիստի ժամանակ Ա/Ձ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ 08.05.2018թ. Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից դիմում է ներկայացվել Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի

հասցեին, որով Ա/Ձ-ն խնդրել է անհապաղ տրամադրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված՝ «Վարբադ» ՍՊԸ-ի հայտի, այդ թվում նաև որակավորման փաստաթղթերի (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը), ինչպես նաև գնահատող հանձնաժողովի արձանագրությունների պատճենները: Ի պատասխան նշված դիմումի Հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացվել են «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստթղթերը: 10.05.2018թ. Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ևս մեկ անգամ դիմում է ներկայացվել Հանձնաժողովին, որում Ա/Ձ-ն նշել է, որ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված երկրորդ փուլի որակավորման փաստաթղթերը Հանձնաժողովի քարտուղարի կողմից այդպես էլ չեն տրամադրվել: Ի պատասխան վերոնշյալ գրությանը՝ Հանձնաժողովը 14.05.2018թ. Ընկերության էլեկտրոնային հասցեին է ուղարկել Ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը, ինչպես նաև գրություն, որով հայտնել է, որ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետը և Հրավերի 7.8 կետը՝ Հանձնաժողովն արդեն իսկ տրամադրել է այն փաստաթղթերը, որոնց տրամադրման իրավունքը հանձնաժողովն ունի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի՝

-7.8 կետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև մասնակցի, այդ թվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը 17.05.2018թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով տալ պարզաբանում, արդյո՞ք գնահատող հանձնաժողովն իրավասու է տրամադրել մասնակցի որոկավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի պատճենները նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

Հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետը, հայտնել է, որ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ որոկավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի պատճենները հանձնաժողովի քարտուղարի կողմից անհապաղ պետք է տրամադրվեն նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ 08.05.2018թ. և 10.05.2018թ. Ա/Ձ Նաիրի Թորոսյանը էլեկտրոնային եղանակով դիմել է Հանձնաժողովի քարտուղարին՝ խնդրելով տրամադրել «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող Հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն պահանջված փաստաթղթերը Ա/Ձ Նաիրի Թորոսյանին այդպես էլ չեն տրամադրվել:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ 14.05.2018թ. Պատվիրատուն տեղեկագրում հրապարակել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման արդյունքներով «Վարբադ» ՍՊԸ-ի հետ Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, և սահմանվել է անգործության ժամկետ՝ նույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է նույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նկատի ունենալով, որ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտը (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) հանդիսանում են հայտով ներկայացվող՝ Օրենքի 30-րդ հոդվածի

1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր (տեղեկություններ), Բողոքներ քննող անձնը գտնում է, որ Հանձնաժողովը՝ նշված փաստաթղթերը Ա/Ձ Նաիրի Թորոսյանի պահանջով վերջինիս չտրամադրելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա/Ձ Նաիրի Թորոսյանի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 16.05.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁ-4/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող բոլոր փաստաթղթերի (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները ԱՁ Նաիրի Թորոսյանին անհապաղ տրամադրելու մասին համապատասխան որոշում:

3.Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 2018 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողովի կողմից կայացրած պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**